Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական

Ընտանիքները և աղոթքը

Ես գիշեր, երբ նստած էի հորս անկողնու կողքին, նա խոսեց իր մանկության տարիների մասին: Նա խոսեց դժվար ժամանակներում իր ծնողների սիրո մասին և իր Երկնային Հոր ու Փրկիչի սիրո մասին: Ես գիտեի, որ նա մահանում էր քաղցկեղից, ուստի ես չէի զարմանում, որ երբեմն նա խառնում էր իր Երկնային Հոր հանդեպ ունեցած զգացմունքները իր երկրային հոր սիրո և բարության հետ: Հայրս հաճախ է ասել, որ երբ նա աղոթում էր, կարծում էր, որ կարողանում է մտովի տեսնել Երկնային Հոր ժպիտը:

Նրա ծնողներն իրենց օրինակով սովորեցրել էին նրան աղոթել, կարծես նա խոսում էր Աստծո հետ և որ Աստված կպատասխաներ նրան սիրով: Նա մինչև վերջ ուներ այդ օրինակի կարիքը: Երբ ցավը սաստկացավ, առավոտյան մենք գտանք նրան անկողնու կողքին ծնկի եկած: Նա շատ թույլ էր անկողին վերադառնալու համար: Նա ասաց մեզ, որ աղոթել ու հարցրել էր իր Երկնային Հորը, թե ինչու պետք է այդքան շատ տառապեր, երբ միշտ փորձել էր լավը լինել: Նա ասաց, որ ստացել էր սիրալիր պատասխան. «Աստված ունի խիզախ որդիների կարիքը»:

Ուստի նա պայքարեց մինչև վերջ, վստահելով, որ Աստված սիրում է իրեն, լսում է իր աղոթքները և կբարձրացնի իրեն: Նա օրհնված էր նախապես իմանալով և երբեք չմոռանալով, որ սիրող Աստված այնքան մոտ էր, որքան աղոթքը:

Ահա թե ինչու է Աստված ուսուցանել ծնողներին. «Եվ նրանք նաև պետք է իրենց երեխաներին ուսուցանեն աղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ» (ՎԱՈՒ 68.28):

Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է՝ Մորմոնի Գրքով և քահանայության բոլոր բանալիներով, որոնք կարող են կապել ընտանիքներին, քանի որ պատանի Ջոզեֆ Սմիթը աղոթեց հավատքով: Այդ հավատքը նա ձեռք էր բերել սիրառատ և հավատարիմ ընտանիքում:

Քսան տարի առաջ Տերն ընտանիքներին տվեց այս խորհուրդը «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» ուղերձում Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի միջոցով. «Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում և պահպանվում են հավատի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի և առողջ ու ստեղծարար միջոցառումների սկզբունքներով»:[1]

Մարգարե Ջոզեֆ Սմիթի ընտանիքի հանդեպ մենք երախտիքի մեծ պարտավորություն ունենք նրա դաստիարակության համար: Նրա ընտանիքում առկա էին ոչ միայն հավատքի և աղոթքի օրինակը, այլ նաև ապաշխարությունը, ներողամտությունը, հարգանքը,

սերը, կարեկցանքը, աշխատանքը և առողջ ու ստեղծարար միջոցառումները:

Սերունդները, որ գալիս են ձեզանից հետո, կարող են ձեզ օրինյալ անվանել՝ ձեր ընտանիքում աղոթքի ձեր օրինակի համար: Դուք միգուցե չմեծացնեք Աստծո մի մեծ ծառայի, սակայն դուք կարող եք ձեր աղոթքներով և ձեր հավատարմության օրինակով օգնել Տեր Հիսուս Քրիստոսին մեծացնել լավ ու սիրելի աշակերտներ:

Տիրոջն օգնելու համար ձեր բոլոր ընտրությունների մեջ աղոթքը ամենակարևոր տեղն է զբաղեցնելու: Ակնհայտ է, որ կան մարդիկ, ովքեր երբ աղոթում են, ոգեշնչում են ուրիշներին բացել իրենց աչքերը՝ տեսնելու, թե ով կա այնտեղ: Դուք կարող եք դառնալ նման մի անձնավորություն:

Խորհեք, թե ինչ նշանակություն դա կարող է ունենալ նրանց համար, ովքեր ծնկի են գալիս ձեր հետ ընտանեկան աղոթքի ժամանակ: Երբ նրանք զգան, որ դուք հավատքով եք խոսում Աստծո հետ, նրանց հավատքը կմեծանա նույնպես Աստծո հետ խոսելու համար: Երբ դուք աղոթեք՝ շնորհակալություն հայտնելու օրհնությունների համար, որոնք նրանք գիտեն, որ տրվել են, նրանց հավատքը կմեծանա առ այն, որ Աստված սիրում է իրենց և որ Նա պատասխանում է ձեր աղոթքներին և կպատասխանի իրենց աղոթքներին: Դա կարող է տեղի ունենալ ընտանեկան աղոթքի ընթացքում միայն այն դեպքում, երբ դուք երբեմն-երբեմն նախապես ունեցել եք այդ փորձառությունը անձնական աղոթքի ժամանակ:

Ես շրջանակում եմ օրհնված լինել՝ ունենալու հայր և մայր, ովքեր խոսել են Աստծո հետ: Ընտանիքներում աղոթքի զորության նրանց օրինակը շարունակում է օրհնել սերունդներին, որ գալիս են նրանցից հետո:

Իմ զավակներն ու թոռները ամեն օր օրհնվում են իմ ծնողների օրինակով: Հավատը, որ սիրող Աստվածը լսում և պատասխանում է աղոթքներին, փոխանցվել է նրանց: Դուք կարող եք նման ժառանգություն ստեղծել ձեր ընտանիքում: Ես աղոթում եմ, որ դուք անեք դա:

ՀՂՈՒՄ

1. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:

ՏՈՆԵԼ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

«Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» ուղերձն ուսուցանում է սկզբունքներ, որոնք այսօր նույնքան արդիական են, որքան 1995 թվականի սեպտեմբերի 23-ին, երբ ներկայացվեցին առաջին անգամ: Հրավիրեք ընտանիքներին, որոնց դուք ուսուցանում եք, տոնել հայտարարության 20-ամյակը հետևյալ կերպ.

1. Կազմելով սկզբունքների ցանկ, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն նրանց համար: (Տես, թե ինչպես է Նախագահ Այրինգը դա անում աղոթքի հետ կապված վերոհիշյալ ուղերձում:)
2. Քննարկելով, թե ինչպես կարող է յուրաքանչյուր սկզբունքն օրհնել նրանց այսօր և ապագայում:
3. Դնելով հատուկ նպատակներ, որոնք ներառում են այդ սկզբունքներն իրենց կյանքում և կիսվել դրանցով ուրիշների հետ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Աշխատել աղոթելու վրա

Նախագահ Այրինգն ուսուցանում է, որ ձեր ընտանիքը կարող է օրհնվել Երկնային Հոր հետ ձեր ամուր հարաբերություններով: Դուք կարող եք լավացնել ձեր հարաբերությունները Նրա հետ՝ լավացնելով ձեր աղոթքները: Ահա մի քանի գաղափարներ, թե ինչպես կարելի է դա անել.

Նախքան ձեր աղոթքը սկսելը, մի քանի րոպե տրամադրեք և մտածեք, թե ինչ եք ցանկանում ասել: Խորհեք ձեր ունեցած հարցերի կամ ձեզ անհանգստացնող բաների շուրջ. դուք նույնիսկ կարող եք գրի առնել դրանք, որպեսզի չմոռանաք: Այդ ժամանակն օգտագործեք նաև ձեր միտքն առօրյա հոգսերից ազատելու համար, որպեսզի կարողանաք կենտրոնանալ Սուրբ Հոգու մեղմ ոգեշնչումների վրա: Եթե ձեր միտքն աղոթելիս հակված է խորհրդածելու, փորձեք պատկերացնել Երկնային Հորը լսելիս: Խոսեք մանրամասնորեն: Նաև մի քանի րոպե հատկացրեք աղոթքի վերջում, որպեսզի լսեք Հոգու հուշումները: Դուք կարող եք գրել ձեր տպավորությունները ձեր օրագրում:

Հիշեք, որ աղոթքը աշխատանք է, ուստի մի անհանգստացեք, եթե այն փորձեր է պահանջում կամ դժվար է թվում: Աղոթելու ձեր ջանքերը կարող են օգնել ձեզ հարաբերություններ զարգացնել Աստծո հետ, որոնք կօրհնեն սերունդներ:

ԵՐԵԽԱՆԵՐ

Աղոթքի հիշեցում

Նախագահ Այրինգն ուսուցանում է, որ կարևոր է աղոթել ձեր ընտանիքի հետ: Դուք կարող եք օրինակ լինել ձեր ընտանիքի համար՝ ամեն օր աղոթելով: Դուք կարող եք նաև հիշեցնել ձեր ընտանիքին աղոթել միասին ամեն օր: Հիշեք Նախագահ Այրինգի հետևյալ մեջբերումը մեկ այլ ելույթից. «Երկնային Հայրը լսում է ձեր աղոթքները: Նա սիրում է ձեզ: Նա գիտի ձեր անունը» («Շարունակվող հայտնություն», *Լիահոնա,* նոյ. 2014, 73): Այս մեջբերումը գրեք մի քարտի կամ թերթիկի վրա և դրեք մի տեղ, որ ձեր ողջ ընտանիքը տեսնի: Այսպիսով դուք կարող եք միշտ հիշել, որ Երկնային Հայրը ցանկանում է լսել ձեզ:

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/15: Թարգմանության հաստատումը. 6/15: *First Presidency Message, September 2015*-ի թարգմանությունը: Armenian 12589 201

Հիսուս Քրիստոսի աստվածային հատկանիշները. զորեղ և փառքով լցված

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և փորձեք հասկանալ, թե ինչով պետք է կիսվեք: Փրկիչի աստվածային հատկանիշները հասկանալը ինչպե՞ս կմեծացնեն ձեր հավատքը Նրա հանդեպ և կօրհնեն նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք reliefsociety.lds.org.

Սա Այցելող Ուսուցիչների Ուղերձների այն շարքից է, որը նվիրված է Փրկիչի հատկանիշներին:

Սուրբ գրություններն ուսուցանում են մեզ, որ Հիսուս Քրիստոսը «ստացավ ողջ զորությունը և երկնքում, և երկրի վրա, և Հոր փառքը նրա հետ էր» (ՎԿՈւ 93.17): Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդն ասել է, որ այս զորությամբ մեր Փրկիչը ստեղծել է երկինքներն ու երկիրը, կատարել է հրաշքներ և տարել է ցավերը Գեթսեմանիում և Գողգոթայում:[1] Երբ մենք սկսենք հասկանալ դա, մեր հավատքն առ Քրիստոս կմեծանա և մենք ավելի ուժեղ կդառնանք:

Երբ մենք կապում և պահում ենք տաճարային ուխտերը, Տերն օրհնում է մեզ Իր զորությամբ: Սփոփող Միության գերագույն նախագահ Լինդա Ք. Բըրթընը ասել է. «Ուխտեր պահելը ամրացնում, զորացնում և պաշտպանում է: … Վերջերս իմ սիրելի նոր ընկերուհուն տեսա: Նա վկայեց, որ տաճարային օժտումը ստանալուց հետո զգում է, որ ուժ և զորություն ունի դիմակայելու գայթակղություններին, որոնց դեմ պայքարել էր նախկինում»:[2]

Նեփիին վկայություն է բերում ուխտի զորության մասին. «Ես՝ Նեփիս, տեսա Աստծո Գառի զորությունը, որ այն իջավ Տիրոջ ուխտյալ ժողովրդի վրա, և նրանք զինված էին արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով» (1 Նեփի 14.14):

Լրացուցիչ սուրբ գրություններ

Երեմիա ԾԱ.15, Հայտնություն Ա.6, Հակոբ 4.6–7, Մոսիա 3.17

Սուրբ գրություններից

Մարթայի և Մարիամի հանդեպ մեծ կարեկցանքով լցված լինելով՝ Հիսուս Քրիստոսը հարություն տվեց Ղազարոսին մեռելներից Աստծո զորությամբ, որը Նա ուներ:

Հիսուսը հասավ Մարթայի և Մարիամի տուն Ղազարոսի գերեզմանում լինելուց չորս օր անց: Նրանք գնացին Ղազարոսի գերեզման և Հիսուսը պատվիրեց, որ մուտքի քարը հեռացվի: Հիսուսը Մարթային ասաց. «Չասեցի՞ քեզ, որ եթէ հաւատաս, Աստուծոյ փառքը կտեսնես»: Ապա Նա աղոթեց Հայր Աստծուն և «մեծ ձայնով աղաղակեց. Ղազարոս, դուրս եկ:

Եւ մեռելը դուրս եկաւ՝ ոտները եւ ձեռքերը պատանով կապած»: (Տես Հովհաննես ԺԱ.1–45:) Տերն օգտագործում է Իր զորությունը մեզ փրկագնելու և հնարավորություն ընձեռելու համար: Նրա հանդեպ ունեցած մեր հավատը կմեծանա, երբ մենք հիշենք, որ Նա լցված է զորությամբ և փառքով:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մ. Ռասսել Բալլարդ, «Սա է իմ գործը և իմ փառքը» *Լիահոնա,* մայիս 2013, 18:
2. Լինդա Ք. Բըրթըն, «Ուխտերը պահելու զորությունը, ուրախությունը և սերը», *Լիահոնա,* նոյ. 2013, 111:

Խորհեք այս մասին

Ինչպե՞ս է Աստծո զորությունը զինում մեզ զորությամբ և փառքով:

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/15: Թարգմանության հաստատումը. 6/15: *Visiting Teaching Message, September 2015*-ի թարգմանությունը: Armenian: 12589 201